ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ ԵՒ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

(Սեպ. հեռագիր)

Էջմիածին, 15 հոկտեմբերի

Հայ տպագրութեան 400 ամեակի և հայ տառերի գիւտի 1500-ամեակի տօնակատարութիւնը կրում էր հանդիսաւոր բնոյթ։

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ V-ը, միաբանները և պատգամաւորները շաբաթ օրը, հոկտեմբերի 13-ին, գնացին Օշական, ուր և գտնվում է ս. Մեսրոպի գերեզմանը։

Հանդիսաւոր պատարագից յետոյ 3000-ից աւելի ժողովրդի ներկայութեամբ բացուեցաւ կատարվեց տօնահանդէսը։

Կաթողիկոս Գէորգ V բացված համարելով համազգային մեծ տօնի յօբելեանը՝ բացատրեց Մեսրոպի գիւտի ունեցած ազդեցութիւնը հայերի կուլտուրական զարգացման վրա։

Ճառեր խօսեցին Կանայեան, Ալ. Քալանթար, Թորոսեան։

Օշականցիների կողմից հանդիսականները հիւրասիրվեցին Նախաճաշով։ Կենաքներ առաջարկվեցին Հ. Առաքելեանի, Ե. Շահազիզի, Կարապետ եպիսկոպոսի, Մաքսուտեան վարդապետի, Ստ. Մալխասեանցի, Մանդակունի քահանայի և Այվազեան արքեպիսկոպոսի կողմից։

Կիրակի, հոկտեմբերի 14-ին, Էջմիածնում կատարվեց հանդիսաւոր հոգեհանդիսա գրի և տպագրութեան հանգուցեալ վաստակաւորների յիշատակին։ Իսկ այդ օրը Երեկոյեան Գէորգեան ճեմարանում տեղի ունեցաւ գրական երեկոյթ Կաթողիկոսի ներկայութեամբ։ Երեկոյթից յետոյ տրվեց ընթրիք։

Ստացված են բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ զանազան քաղաքներից և հիմնարկութիւններից։

Դպրոցական ֆոնդի օգտին Էջմիածինը նուիրաբերել է 15,000 ռուբլի։

Սղազարեան